# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՈԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարանի համայնքապետարան, գ. Գոգարան
հեռ. 0255 6 06 04

## ՈՐՈՇՈՒՄ

«21 » Մայիսի 2020 թվականի N 23

ԳՈԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝

Որոշում եմ.

1.Գոգարանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (3.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2020 թվականի օգոստոսի 17-ին , ժամը՝ 14-00-ին , Գոգարանի համայնքապետարանում անցկացնել մրցույթ :

2.Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն htt://www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին 2-օրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին :

3.Մրցույթային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Գոգարան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ս. Պողոսյանին :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ